# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/232/3 - 24

<<25>>__դեկտեմբերի 2024թ                                                    ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Բագարան բնակավայր, Շուշանավանքի նորոգման, վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 158 561.91 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝                                        Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Միրեկյանյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Բագարան բնակավայր, Շուշանավանքի նորոգման, վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթեր

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Բագարան բնակավայր, Շուշանավանքի նորոգման, վերականգնման և ամրակայման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ հուշարձան մոտեցող ճանապարհի խճապատում, նախապատրաստական աշխատանքների իրականացում: Քանդման և ապամոնտաժման աշխատանքների կատարում: Վերատեղադրման և նոր տաշ ու շարի իրականացում, կարերի, ճեղքերի և ճաքերի կարանախցափակում հատուկ բաղադրակազմի շաղախով: Մատուռի և քառախորան եկեղեցու վերանորոգման աշխատանքների իրականացում: Խարիսխների տեղադրում և խոռոչների բետոնացում: Միաձույլ հիմնահատակի կառուցում, եկեղեցու ճաքերի ամրակայում: Մետաղական հիմնակմախքով անցուղու կառուցում, որմնասյունների ամրացումների իրականացում: Միձույլ գոտու և պատի կառուցում: Տանիքի վերականգնամ աշխատանքների իրականացում: Գմբեթի մաքրում և ճաքերի վերականգնում, գմբեթի քիվի միաձույլ երկաթբետոնե գոտու իրականացում:

*<u>Նախահաշվային մաս</u>*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **<u>158 561.91</u>** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **<u>2272.65</u>** և մեքենաների շահագործման ինդեքսը **<u>3022.31</u>**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N **11** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*<u>Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը</u>*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝*** ***Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ՝*** ***Տ. Վիրաբյան***